ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.18. Հարավարևելյան Ասիա: Բնակչությունը, տնտեսությունը

• • •

Հարավարևելյան Ասիայի բնակչության բնական աճի միջին ցուցանիշը մի փոքր բարձր է համաշխարհայինից՝ 1,16%: Տարածաշրջանի երեք երկրներ համարվում են գերխոշոր, այսինքն ունեն 100 մլն և ավելի բնակչություն, իսկ 270 միլիոնանոց Ինդոնեզիան բնակչության ներկայիս աճի պայմաններում մոտ ապագայում կարող է անցնել ԱՄՆ-ից և հայտնվել 3-րդ հորիզոնականում: Տարածաշրջանում բնակչության թվաքանակով ամենափոքր պետությունը Բրունեյն է՝ 0,5 մլն. մարդ: Ինդոնեզիան ամենամեծ մահմեդական երկիրն է, բնակչության 70%-ը դավանում է իսլամ: Ֆիլիպիններում տիրապետող կրոնը քրիստոնեությունն է, մնացած երկրներում՝ բուդդայականությունը: Տարածված են նաև տեղական հավատքները:

• • •

Բնակչությունը տեղաբաշխված է չափազանց անհավասարաչափ: Միջին խտությունը առանց Սինգապուրի կազմում է շուրջ 140 մարդ քառ. կմ: Այս ցուցանիշով աշխարհի առավել խտաբնակ տարածաշրջաններից է: Բարձր է խտությունը Ֆիլիպիններում և Վիետնամում, ցածր՝ Լաոսում: Չափազանց խիտ են բնակեցված Սումատրա, Ճավա, Լուսոն, Մինդանաո կղզիները, Մալակկա թերակղզին, Մեկոնգ, Իրավադի, Սալուին գետերի միջին և ստորին հոսանքների հովտային շրջանները: Նոսր են բնակեցված տարածաշրջանի լեռնային շրջանները՝ Թաիլանդի, Մյանմայի հյուսիսային շրջանները, Ֆիլիպինների և Ինդոնեզիայի բազմաթիվ կղզիները:

• • •

Հարավարևելյան Ասիայի երկրներն ունեն բարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրք, հողակլիմայական պայմաններ, հարուստ բնական

ռեսուրսներ: Բավարար են մարդկային ռեսուրսները: Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է, որում չափազանց մեծ է բուսաբուծության բաժինը: Հացահատիկային գլխավոր մշակաբույսը բրինձն է, որի համախառն բերքով և արտահանման ծավալներով աչքի են ընկնում Ֆիլիպինները, Ինդոնեզիան, Վիետնամը, Թաիլանդը, մանիոկի մշակությամբ՝ Թաիլանդը, արևադարձային պտուղների արտադրությամբ՝ տարածաշրջանի գրեթե բոլոր երկրները:

• • •

Անասնապահությունը թույլ է զարգացած: Կարևոր ճյուղերն են ձկնորսությունը և ձկնաբուծությունը, թռչնաբուծությունը, խոզաբուծությունը, շերամապահությունը:

Զարգացած է հանքարդյունաբերությունը և գյուղատնտեսական հումքի վերամշակումը: Նավթի հանույթով և արտահանմամբ աչքի են ընկնում Ինդոնեզիան, Բրունեյ Դարուսալամը (ՆԱԵԿ-ի անդամ են), ածխի հանույթով՝ Վիետնամը, անագի ձուլմամբ՝ Մալայզիան և Ինդոնեզիան:

• • •

Սինգապուրը աշխարհի խոշոր ունիվերսալ նավահանգիստը, որը նաև խոշոր ֆինանսական կենտրոն է: Զարգացման նման ուղի է ընտրել նաև Մալայզիան, որին հետևում են Ինդոնեզիան, Թաիլանդը, Ֆիլիպինները: Արագ զարգանում է բազմաճյուղ մեքենաշինությունը՝ ավտոմոբիլաշինությունը, ավտոհավաքումը, կապը և էլեկտրոնիկան, կենցաղային մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը՝ նավթաքիմիա, դեղագործություն և այլն: Տարածաշրջանի երկրները կարևոր ներդրում ունեն տրիկոտաժի, գորգագործության, կահույքի արտադրության մեջ և այլն: Արագ զարգանում են ծովային և օդային տրանսպորտը:

• • •

Արագ աճում է քաղաքաբնակների տեսակարար կշիռը՝ 49%: Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում առկա է «կեղծ ուրբանացման» երևույթը, բացառություն է կազմում Սինգապուրը, որի ուրբանացման մակարդակը գրեթե 100% է: Առանց Սինգապուրի տարածաշրջանում ուրբանացման մակարդակը մոտենում է 44%-ի: Ամենացածրը Կամբոջայում է՝ 24%, ամենաբարձրը՝ Բրունեյ Դարուսալամում՝ ավելի քան 78%: Տարածաշրջանի որոշ երկրների բնորոշ է սուպերուրբանացումը:

• • •

Առանձնանում է նավթ արդյունահանող և արտահանող երկիր Բրունեյ Դարուսալամը: Զարգացման միջին մակարդակ ունեն Ինդոնեզիան, Թաիլանդը, Ֆիլիպինները և Վիետնամը: Թիմոր Լեշթին և Լաոսը ագրարային երկրներ են:

• • •

Տարածաշրջանի երկրներում վերջին տասնամյակներում տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի խոշոր ներդրումներ (ինվեստիցիաներ) են կատարվում: Ստեղծվում են ազատ տնտեսական գոտիներ (ԱՏԳ), որոնք ապահովում են մրցունակ արտադրանք և ծառայություններ: Մեծ է Ճապոնական, Հարավ-Կորեական ընկերությունների դերը մեքենաշինության մեջ: